ՅՈՒ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2006

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2006

ՀՏԴ 803.0(07)
ԳՄԴ 81.2 Գերմ. g7
Գ 124

Հրատարակության է ներկայացրել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության
ֆակուլտետի խորհուրդը

Խմբագիր՝ բ.գ.թ., դոց. *Ք. Աղայենկյան*

Գաբրիելյան Յու. Մ.

Գ 124 Գերմաներեն լեզվի տիպաբանություն: (Ուսումնական ձեռնարկ): ԵՊՀ. -Եր.: Երևանի համալս. հրատ., 2006թ., 102 էջ

Սույն ձեռնարկը ընդգրկում է «գերմանական բանասիրություն» մասնագիտացմամբ բուհական ուսումնական ծրագրերով նախատեսված «Գերմաներեն լեզվի տիպաբանության» լրիվ դասընթացը, ինչպես նաև «Գերմաներենի և հայերենի զուգադրական քերականության» հատուկ դասընթացի առանձին բաժինները: Այն կարող է հետաքրքրել նաև ընդհանրապես լեզուների տիպաբանությամբ զբաղվող մասնագետներին և գերմաներեն լեզու ուսումնասիրողներին:

Գ $\frac{4602020103}{704(02)06}$ 2006

ԳՄԴ 81.2 Գերմ. g7

ISBN 5-8084-0752-4

© Գաբրիելյան Յու.Մ., 2006 թ.

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լեզվաբանական այն գիտակարգը, որը զբաղվում է ցեղակից և ոչ ցեղակից լեզուների կառուցվածքային առանձնահատկությունների նմանությունների և տարբերությունների ուսումնասիրությամբ, կոչվում է տիպաբանություն:

Լեզուների կառուցվածքային նմանությունները առաջանում են երկու ճանապարհով. կա՛մ կառուցվածքային փոխառությունների միջոցով, որի արդյունքում մեկ լեզվի իմաստաբանական, բառակազմական և շարահյուսական առանձնահատկությունները պատճենվում են մյուս լեզվում, կա՛մ էլ տարբեր լեզուների ինքնուրույն զարգացման մեջ նման միտումների գործողությամբ, որոնք նախապես ձևավորել են համապատասխան լեզվական համակարգերում: Բնականաբար, տարբեր կարգի պատճենումները լեզուների միջնորդավորված կամ անմիջական շփման հետևանք են: Վերջինս էլ ենթադրում է առաջին հերթին այդ լեզուների տարածման աշխարհագրական ընդհանրություն, իսկ եթե այդ շփումը անմիջական չէ՝ ապա համապատասխան լեզվական հանրույթների քաղաքական կամ մշակութային երկարամյա կապեր: Հակառակ դեպքում գործ ունենք նույն կարգի ներլեզվական միտումների գործողության արդյունքում առաջացած նմանությունների հետ, որոնք էլ տիպաբանական լեզվաբանության կամ լեզվաբանական տիպաբանության ուսումնասիրության հիմնական առարկան են: Իսկ լեզվական շփումների արդյունքում առաջացած նմանություններով զբաղվում է արեալային կամ տարածքային լեզվաբանությունը:

Լեզվաբանական տիպաբանության զարգացման վաղ շրջանում (19-րդ դ.) համապատասխան ուսումնասիրությունների հիմնական նպատակը տարբեր լեզուների ձևաբանական տիպի որոշումն էր և ապա դրանց խմբավորումը ըստ այս կամ այն տիպի: Այդպիսիք էին Շլեգել եղբայրների, Վ. Հումբոլդտի, Ա. Շլայխերի և այլոց ուսումնասիրությունները, որտեղ փորձ էր արվում աշխարհի տարբեր լեզուները խմբավո-